

ՀԱՆԴԷՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՆՅՔ ԸՆԴ ԱՓՐԻԿԷ

Ճառապարհորդութիւն 'ի Ջաւզիպարէ 'ի Պէնկոշէլա

Վ. Լ. ՔԱՄԵՐՈՆԻ ԱՆԳՂԱՅԻՈՅ՝

Տիլոն, ինքն ալ անձամբ այցելութեան եկաւ ցեղապետին, որ սիրով ընդունեցաւ զինքը, և զմհոնկոն որոշեց որ ըլլայ վաթսուն կանգուն խոշոր կտաւի:

Երկրորդ օրը, մէկ ու կէս ժամ ուղեգնացութենէն յետոյ, Մսուհուաճի դուռը հասանք. վեց կամ ութ մեծամեծ՝ բարեւելն և մաքուր տնակներ կը կազմէին տմբողջ գեղը: Սակայն ուրիշ աւան մ'ալ կը տեսնուէր մերձաւոր ինկրային մէջ:

Բոլոր այս տնակներս անտառակներու մէջ կանգնուած են, և մուտքի տեղ՝ օձապտոյտ ամենանեղ ճամբայ մը միայն ունին, որ զիրաւ կը վաղուի, և պատերազմի ժամանակ անմատչելի կ'ըլլայ յարձակողաց տկար գործնաց: Մսուհուաճի ընակիչքն՝ նպաստէր իրենց ամրութեանց՝ կրնան գերաւորութեան երթալ չըջակայ գաւառներն, առանց երկիւղի դարձեալ տուժելու: Ե ծովափանց վաճառականներն՝ կը դիւրացնեն իրենց թշուառ գերեաց զնահատութիւնը:

Սո՛վ, ըստ պատմելոյ այլոց, կը ճարակէր մեր դիմացն եղող երկիրներուն մէջ. և մարդասէր զլիաւորն համոզուած ըլլալով թէ պաշար փնտրուելու երթալի կրնայ վրտանգաւոր ըլլալ մեր մարդկանց, անոր համար մտածեց իւր հպատակները զրկիլ. և փոխարէն իւր այս ծառայութեան, կը

խնդրէր միայն կանխաւ այն վաճառուց գինը: Սակայն այս պաշտօնական անձս, կերպան ընդունելուն պէս, ներուհին խընգրեց իւր խոստմունքը պահել չկարենալուն համար. և Հինգ օր սպասենէս վերջը՝ ստիպուեցանք հեռանալ անկէ, հաղիւ չորս ժուռի համար կերակուր ունենալով:

Փառնի մը մերձաւոր ցեղապետներ իրենց համար պատեհ առնելով մեր այս յապաղումն, հարկ պահանջելու եկան: Անորհրէր դաբար տուի անոնցմէ մէկուն, որուն առնուն էր Մգոնկա, վաթսուն կանգուն կտաւ և եօթն կանգուն գունաւոր մետաքսեղէն: Պոմպայ, զիս համոզած էր թէ այս զլիաւորս մեր անցքին վրայ կը ընակէր, և թէ մեծամեծ վնասներ մեզի պիտի հասցընէր եթէ զինքը չուզէինք գոհ ընել: Վերջն իմացայ որ այն խաբեբային զիւղը մեր գացած ճամբուն վրայ չէր, այլ անոր հիւսիսային կողմը, և 'ի յետուստ մեզ՝ Քազուհուա անուամբ ուրիշ զլիաւոր մ'ալ երկու մեծ ծրար կտաւ ուղեց. բարեբաղդաւոր իմացայ թէ արդէն իսկ անոր երկրէն անդին անցած էինք:

Ճամբայ ելլելուն անխընթաց օրն՝ կարաւանի մը զլիաւորներու այցելութիւնն ունեցանք, որ մեզմէ կանոխ ուղևորեալ ըլլալով 'ի ծովափանց, դանազան դժուարութեանց

պատճառաւ արգիլուած կեցեր էին Սգան-
էի ճամբուն վրայ: Սակայն այն կարա-
ւանն՝ որ արարացւոյ մը կը վերաբերէր,
յիօթնհարիւր տնձանց բաղկացեալ էր,
յորոց ոմանք հրացան ալ ունէին:

Երկայն ժամանակ 'ի Մսուհուաճ կենալ-
նիս բոլորովին անօգուտ չեղաւ. այլ ժամա-
նակ տուաւ մեզի կինդանեաց բռնները
շտկելու, և զիս ալ ջերմէն առողջացուց:
Բայց ասոր հակառակ՝ կանոնաւորութեան
մէջ թոյլցուց զմեզ և վեց ալ դասալիբ ու-
նեցանք: Բաց ասկէ, նոյն օրերուն մէջ
յանկարծակի թակադի մ'ալ մտաւ:

Երբ հանգիստն սովորականէն աւելի ե-
ղած ըլլայ, միշտ ճամբայ ելլեն զմուսար
կ'ըլլայ. ապրիլ 14ին՝ կարաւանն սաստիկ
գիտաբուժեամբ ճամբայ ելաւ:

Ժամն ութին մօտ՝ արաբացւոց դաշտի
մը քովէն անցանք, յորում եօթը վրաններ
կային, որք զանազան կառուածատեսարց կը
պատկանէին: Խրաքանչիւր վրան՝ մետա-
քեայ շրջապատ մը և կամ ուռճացած
խոտէ պատնէջ մ'ունէր, կանանոցը յայլոց
վերաբերութենէ բաժնելու համար:

Այս կարաւանիս զխաւորներն ամենա-
մեծ նեղութեան մէջ էին, թակադներուն
ըստ մեծի մասին դասալիբ ըլլալուն պատ-
ճառաւ: Կրնայի ուրեմն մեծապէս երջանիկ
համարել զիս՝ մինչև 'ի Մսուհուաճի իջեա-
նը վեց բռնակիր միայն կորսնցուցած
ըլլալուն վրայ: Այս չրջակայից իսկիաներն
և տնայնիկն չստ ծածուկ որջեր ունին,
յորս փայտոյնները դարձեալ գտնիլն գրե-
թէ անկարելի է. և այն կողմի մարդկանց
համար՝ Մսուհուաճ մի միայն փայտելու
բոյն է:

Այս Արաբներն փափագ ցուցին մեզի
հետ միանալու: Եթէ սովի ձայնն տարա-
ծուած չըլլար, կ'ընդունէի առաջարկու-
թիւնին, բայց նաև ապրուստ հայթհայ-
թելն չստ գիտար չհամարելով իսկ՝ որչափ
որ վախնալ կու տային, այնչափ քաղմու-
թեան համար կերակուր ճարելն ընթացք-
նիս կը չպատգէր. և ես ըստ կարելոյն կը
ջանայի յատուով հասնիլ Մաքադայի գաղտա-
վայրը. քանի որ օր ըստ օրէ կ'ուշանայի՝
զանիկայ ողողուած գտնելու վտանգն կ'ա-
ւելնար: Նոյն օրուան մէջ տասը մղոն ճամ-
բոյ ըրինք, կէս ժամ հաղիւ հանգչելով,
կտրելով անցներով բարձրաւանդակ մը,

որ չորս կամ հինգ հարիւր ոտք բարձր էր
մեր ճամբայ ելած տեղէն:

Վսեմաբար առջնինս կը բարձրանար
յամնս ծրարուած բարձրաբերձ բլրոց շղ-
թայ մը: Երկիրն աղէկ մշակուած էր, և
երկնաբերձ ծառերէ կազմուած ցանկա-
պատներուն և անտառակներուն մէջէն՝
բազմաթիւ գիւղեր կը տեսնուէին: Այն
կողմերն, յորս երկիրն մշակուած չէր և
կամ իսկիայիւ ծածկուած, խոտն սքանչելի
էր. և քնալ տեղ մը բղթսէ չտեսնելով,
դարմացայ արջառոնդինաց նուազութեան
վրայ, վասն զի այս գաւառս աղէկ ոռո-
գուած, և ըստ բաւականին օրուան տաքէն
շուք ընող ծառերով արգասաւորեալ, կար-
ծես թէ իրացընէ նախիրներ սնուցանելու
համար եղած էր:

Այսին մակուսող դաշտի մէջ՝ մէկմէկ խոր-
նիթ կար, կամ լաւ ես ըսելով, ամենափո-
քրիկ հէւղ մը: Այս ազտիկ ազատամա-
րանիս ներքէ՝ քանի մը ընծայք կախուած
էին՝ չար ողիքն ամոքելու վախճանաւ, որ-
պէս զի բերոց չլնասեն:

Առաջնորդք՝ քանի մը շիրիմներ ցուցին
մեզի, խորտակեալ անթոններով ծածկուած,
և կ'ըսէին, թէ ցեղապետաց գերեզմաննե-
րն: Այդ տեղ շինուած կային նաև քանի
մը խրճիթներ, որոնց մէջ փորբադոցն ծառ
մը, սովորաբար քարդոսի տեսակէ, կամս-
րասիւնը կը ձևացընէր:

Այս արշաւանաց ժամանակ՝ տեսանք ա-
ռաջին անգամ պաւսպպներ, բուսական
աշխարհի փիղերը կամ ձիադետինները,
յորս սպիտակ ծաղկանց գեղեցկութիւնն և
տերևոց փափուկ կոնաչութիւնն՝ ձևոց գե-
ղացնիս տգեղութիւնը կը ծածկեն:

Ի Քիդէմօ՝ զխաւորն այժ մը բերաւ մե-
զի, և յիսուն տող հարկ պահանջեց. բայց
որովհետև իբրև փոքրիկ գոգոն մ'էր խըն-
դիրն չկատարուեցաւ. քնդհակառակն չորս
տող ընդունեցաւ (ութ կանգուն խոշոր կը-
տաւ) 'ի գին կինդանոյն, և չորս տող ալ ի-
բրև ընծայ. և այս թրուց և իւր պահանջա-
ծին մէջ եղած տարբերութեամբն հանգերձ
ինք գինքը գոճ երևցուց:

Դարձեալ որ կ'ուղևորինք՝ ճամբան կը
բարձրանայ սեպացեալ կողի մը վրայ, և
կ'անցնի սաբահարթէ մը, որ թեթև ելեւե-
ջով գէպ յարեմուտք կը խոնարհի, մինչև
յանհարթ դառ 'ի վայր մը՝ ուսկից Լուճէ-

րէնճէրի¹ հովտին մէջ իջանք, Յաճախ կը տեսնէիր այն աւազուանեքուն և որձաքարերը մէջ ծաղիկներ. կային հոն բիրենդական կոպիճներ, և ներքին հողն տեղ մը կարմրագոյն և ուրիշ տեղ ալ մարութ արձաղէ արծաթափայլ ճերմակով լճանգեալ՝ թանձր խառով մը պատած է:

Բազմաթիւ գիղզեցիկ ծաղիկներ այս ուղեորութեան ժամանակ՝ աչքերնիս կը պարարէին. 'ի մէջ այլոց' մասնաւորապէս խոտաբոցէտ շուշաններ, խղիւղ, գիղզեցիկ գեղձորակ փրիմուլներ, և բոյս մը՝ որուն ծաղիկն քիչ մը մատնային ծաղիկն երևոյթն ունի, բայց ուղիղ պսակով: Մինչև հոս՝ սալտակ գարնանազուարճներու, նաև մեծ գիղին մարգարտաց, և կարմիր և երկնագոյն մարտիկ ծաղկանց հանդիպեցանք, որոնք մեր միողոյիսներուն կը նմանին:

Անմիջապէս յիշած զառ 'ի վայրէս իջնելուս պէս' փոքրիկ տարածութեամբ փշալից թուփեր տեսանք, որոնք զանգակաձև ծաղկի նման մեծ մեծ և մանիշակագոյն տերևներ ունէին:

Այնէ կ'ընթանայ Լուսէրէնճէրի՝ հարթ յատակով ընդարձակ հովտի մը մէջ, յորում իւր գեղմունքն երբեմն երբեմն ամուսնամեծ աւերմունք կը պատճառեն: Ի 1872, անձրևաց պատճառաւ, որոնց հետ հասաւ մեծ մրրիկն, որ շատ վնասներ ըրաւ 'ի Չոնգիլար, երկու ժամուան մէջ քսան աւան քանդեց տարաւ, և բազմաթիւ անձիք ալ խեղդեցան²: Մեռելոց ճիւղ թիւն ամուսնացան:

1 Զոր Ագանէյ Ունճէրէնճէրի կ'անուանէ: Թուի թէ Գամբրոնի ուղղագրութիւնն աւելի ճիշդ ըլլայ, վասն զի ք, ք, ա, ուս, հեղեղ կամ ջրոյ սահանք կը նշանակեն, և այս նաշան պէս մէջ գրելով աննայն դեռաց առաւանց առաջին վանկն ասոնցմէ մեկով կը սկսի:

2 Այս ձախարհութիւնս հազիւ հանդիպած էր երբ անցաւ անէջ Ագանէյ, որոյ ճշմարտախոսութիւնն հիմայ աղէկ ծանօթ է, և ինքն կ'ըսէ, թէ հարկէր գեղեր կործանեցան: Սակայն պատճառը թաթառ մ'եղաւ, և ոչ թէ մրրիկախառն անձրև: «Այն գիղզեցին, մինչդեռ ժողովուրդը կը քնանար, շատ գոռալու ձայներ լսուեցան՝ բոմբիւնի նման զարհուրելի շատալմամբ: Մահ՛ իւր պաշտօնը կը կատարէր սոսկի ջրեղէն սրձի մը ձեռով. հեղանիւթաց պատմէ՛ կրնայիր ըսել, որ ծառերը կը խէր, տունները կը կոխէր»: Տես 'ի Սպանէյ (Ինչպէս Գոյս Է Լիւնիքոս) հովտին նկարագրութիւնը՝ յատուկ քան զաւերմունքը և յետ աւերմանն:

նէին չիմացուեցաւ: Կենդանի մնացողներն՝ վերադարձան նորէն գրաւելու այն տեղերը. ոմանք միայն խելացի գտնուեցան՝ բարձրաւանդակներու վրայ շինելով իրենց խրճիթները: Այս ճարպիկ ժողովրդեան աւանի մը մօտ գրինք բանակնիս, և շատ աղէկ ընդունելութիւն գտանք զլիսաւորէն, որ երկու վրան տուաւ մեզի կահ կարասիք գնելու համար: Գետոյն միւս կողմը ճիւղ գիմացնիս լեռներ կը բարձրանային, որոնց ստորոտն երկու օր ետքը հասանք:

Հասնելունս պէս՝ Պոմպայ ըսաւ մեզի. «Պարոններ, Լուսէրէնճէրի մօտ է. վաղը կ'անցնինք»: Բայց հետեւեալ օրը մեկնելուս ժամանակ՝ հինցած աղաղակն դարձեալ սկսաւ լսուիլ. «Տեսա՛ք, դիմացնիս սովի և աղութան երկիր է». և ստիպուեցայ կենալ և մարդ զրկել ամեն կողմ՝ պաշար ճարելու համար, որ բարեբաղդաբար յաջողեցաւ, և երեք կամ չորս օրուան համար մեզի կերակուր պատրաստեցինք:

Կէս օրուան դէմ, այն կարաւանն՝ որ կ'ուղէր մեզի հետ միանալ, առաջ անցաւ և փութաց Լուսէրէնճէրի ալ ափանցը վրայ իջեանելու. մնացած Արաբներն, որոնք նմանապէս այն խումբին կը վերաբերէին, կ'երթային ընդ մէջ Վուարօրի և Վուսպէնի:

Երկրորդ առաւօտը ժամը հինգին՝ պատրաստ էինք ուղեորելու. արշալուսով անցանք գետին ծանծաղուտէն: Արաբացիք իրենց բանակը չէին վերուցած. իրենց գլխաւորն, Համիս-Իպն-Սէլիմ, մարդասիրաբար բարեւ տուաւ մեզի անցնելունս ժամանակ, և իւր թմբակաւորը զրկեց, որ մինչև այս ինչ մենք իմացնէս թմբուկ դարնէ:

Երրորդ կէտը Լուսէրէնճէրին անցանք, հազիւ երեսուն կանգուն լայն էր, և ջուրն մինչև ծունկերնիս հասաւ. բայց անոր անկողինը մէկ արիւնքէն ինչուան միւս արիւնքն երկու հարիւր յիսուն կանգոյն չափ է, և թումբերը քսան և հինգ տոք բարձր, որք մեծամեծ յորդութեանց դէմ չեն կրնար դնել: Անկողնոյն յատակն, այս տեղ 'ի ճերմակ աւազոյ կազմեալ է, խառն որձաքարի և կռանիդի և խիճի հետ. և ջուրէն սաստիկ յղկուած կռանիդի մեծամեծ զանազուաններ առդին անդին ցրուած են: Ի շըրջակայս շատ դաշտեր ծածկուած էին 1872ին որդորման մնացուկ աւազով:

Եօթն մղոն ճամբայ ըրած էինք անմշակ երկրի մը մէջ, որ խիտ անտառներով ծածկուած էր, որք Համիսին կարաւանը մեզի հասաւ, Եսաւը անցեր էր քան զմեր կարաւանն և նստեր էի հանգչելու Համար-ընրմն՝ սաստիկ տկարութեան հետք թողուցիր էր վրաս. զոր տեսնելով Համիս, իրեն գրաստն ինծի տուաւ. Թէպէտ յանձն չառի, այլ ինքն քովէս չհեռացաւ, և ընկերակից եղաւ ինծի մինչև որ իմ գրաստս հասաւ:

Անկէ ետև ալ արշաւանքն ամենամանր եղաւ. դիմացնիս ելան սեպացեալ բլուրներ և խոշոր խոշոր խոտերու մայառներ, և յիսուն ոտք խոր զառ 'ի վայրեր' սեպացեալ կողերով որոնք կը ստիպէին շարունակ գրաստուց բռնները վար առնել և մարդկանց ձեռքով վեր վար տանել զանոնք:

Աւերորդ աշխատութեամբ հանդերձ, զոր կը պատճառէին մեզի այս անընդհատ վար առնելու և բեռցրնելու ուշադրութիւնն և արշաւանաց դժուարութիւնքն մեր տկարութեան պատճառաւ, երկիրն այնչափ ձգիչ բաներ ունէր՝ որ գրեթէ յոգնածութիւնն իսկ մոռցընել կու տար: Բլուրներն ըստ մեծի մասին կրանիդէ և տեղ տեղ ալ գրեթէ պարզ որձաքարէ բողբոջին ծածկուած էին Թանձրախիտ մոցառներով այն տեղերն՝ ուր որ հոգը կրցեր էր բարակ խաւ մը կապել. ծառերուն մեծագոյն մասն՝ ակասիա էին, և բողբոջին ծաղկած վիճակի մէջ, և ամբողջ այն հերմակ, դեղին և կարմիր ծաղիկներն, խառն ուրիշ ծառերու ծաղկանց հետ՝ վայելչատեսիլ կոչուեր կը ձևացնէին:

Կէս օրն անցած՝ հասանք իջևանելու տեղն. ժայռոտ անցք մը՝ որ ընդարձակ ջուրերու մէջ կը տանի, և որք կրանիդեայ շտեմարանաց մէջ ժողովուած են: Այս լճացեալ ջուրերէն երկուքը միայն պարպուելու ճամբայ մ'ունին. մին դէպ յարեմուտք, միւսն դէպ յարեւելք, և երկուքն ալ 'ի Բիւնկանի կը թափին:

Այն ճամբան՝ յորմէ կ'երթայինք մենք այն ատեն՝ էր ու դիզ ճամբան, և այն լեռներէն անցուց զմեզ, զոր 'ի Քիդէմոէ սկըսեալ մինչև վերջն աչքերնուս առջնն ունէինք. Պիրզորն և Սիբիբի, միասնալով ուրիշ փորրագոյն չգիտային հետ՝ Տուզհումի ըստւած լեռները կը կազմէին. անցնելով անոնցմէ՝ ստոյգ տեղեկացայ չգիտաներուն

ԳՐԱՎ Գ.

այս մասին անուան, որ Քունկուա կը կոչուի:

Արշաւանքին երկայնութեան և մեր աշ յոգնածութեան պատճառաւ, կարաւանին վերջին ծայրն ցիրուցան եղած էր ճամբուն վրայ, ետ մնացողներէն չափերն՝ արեգական մոնէլէն վերջն հասան յիջևան:

Երկրորդ օրն առաւօտուն կանուխ ուղեորեցանք, ճամբայ մը բռնելով, որ ջուրի ընթացքի մօտէն կ'անցնէր, և ասիկայ նշան էր պարզապէս գծի մը որ պիտի բացուէր ընդ մէջ կտրող խոտերու և պամպուի մացառաց: Այս վերջիններէս ոմանք, զոր նախ տեսանք, պատասուկ բոյսով մը ծածկուած էին երկուտրեակ ծաղկամբ, որոնցմէ ոմանք բարդ էին:

Հինգ մղոնէն աւելի ճամբայ ընելէն ետքն՝ հասանք հովտի մը մէջ, որ Քունկուայի լեռներով չրթապատած է. յորում կը տեսնուէին բազմաթիւ կոնածակ բլուրներ գեղերով պսակուած: Համիսին կարաւանն՝ այն աւաններէն մէկուն մէջ իջաւ, որ Քոնկասա կը կոչուի. իսկ մենք Քունկուա լեռանց չղթայի Համանուն աւանի մը մէջ կեցանք, որուն ամենաբարձր գագաթն դեռ վրանիս կը տիրէր:

Լերանց կողերն՝ եգիպտացորենի արտերով ծածկուած էին, հովտին խոնաւ յատակի բրնձի դաշտ էր. և գեղին մէջ ճրբունէին երանոսներ:

Ընդարձակ շէնք մը՝ զոր արաբացի մը սկսած էր շինել, այն գաւառին մէջ բնակելու դիտմամբ, բայց վերջը կիսատ մնացած, ուստի և կործանման վիճակի մէջ, բազմութեան մեծ մասը իւր մէջն հիւրընկալից: Անոնք որ հօն տեղ չգտան՝ բնակչաց խրճիթներու մէջ ապաստինցան, անձրեակն սղաւտելու համար, որ գրեթէ չարունակ կը անդար, և արդիից գմիզ առաւօտեան ժամն իննէն յառաջ ճամբայ ելլելու: Հինգ մղոն քալելէն ետքը, անձրեակն ստիպեց զմեզ անապատ դեղի մը մէջ մնալ, և հօն կենալ ուղեցիկն բռնակիբք, որպէս գի կեն

1 Այս գաւառիս երանոսն՝ բուն երանոսն էրուն տեսակէն չէ, այլ փոքր ըստւած պղտի ծառ մը, որ բոլոր արեւելեան Աֆրիկէի մէջ կը գտնուի և սովորական կը համարուի. ի վերջոյն՝ իւր վերջին ուղի որով թեան ժամանակ 'ի Զամպէզի, այս ծառով կը ջերմացընէր իւր շոգեւորձ գործին. ըստ իւր կարծեացն՝ այս երանոսն լաւագոյն է քան յԵւրոպայ բերուածը:

բակուր ճարեն իրենց համար: Սովորաբար ծոյլ ըլլալով, ամեն հնարք կը գտնէին հանգիստ ընելու համար: Այս տեղս, զոր երկու օր յառաջ իբրեւ սովի եւ սղութեան երկիր որ նկարագրեցին, ահաւասիկ իբրեւ աւետիսաց երկիր մեղի կը ներկայանայ, մինչդեռ դիմացի երկիրն անապատ էր:

Ճամանակ անցընելու համար, Տիլլոն եւ Ես մէկմէկ առաջնորդ առած՝ որսի գնացինք. թէպէտ եւ անկողոններու եւ վայրի խոզերու հետք տեսած էինք, բայց սակայն անոնք անտեսանելի մնացին: Ճամ մը վընտերեանք վերջն՝ առաջնորդներին մեղրաթրուշուն՝ տեսնալով՝ ետեւէն ինկան, եւ իրենց անճոռնի աղաղակովն՝ վայն բռնելը բոլորովին անկարելի ըրին:

Յաճ տեղերուն պարարտ եւ սև հողն՝ անձրևներէն սաչուն եւ պինդ չաղախ գարձած էր. սակայն բարձրաւանդակներն աւաղային ըլլալով՝ համեմատաբար չոր կը մնային սաստիկ քնձրևներէ ետքն անգամ:

Ի Քոնկասայ կեցող Արարացիք, հասան մեղի անապատ գեղի մը մէջ, եւ բանական անգամ մեղի մօտ. եւ ի միասին ճամբայ ելանք:

Անոնք հաս լեռանց շրջայ մը կը պատէր զհովիտը յերկուց գետափանց: Պամպուներն եւ հաստացողուն սիւզբոյսք ճամբան այնպէս կը փակէին՝ որ ալ յառաջ երթալն ամենադժուար կ'ըլլար. եւ խոտերուն բարձրութիւնն՝ բլուրներուն տեսարանը կ'արգելէր. իրացնէ տեսարան սքանչելի, եթէ աստ եւ անդ տեսածներէս չափելու ըլլանք, որք կ'երեւէին երբեմն երբեմն խոտերու պատուածներէն: Այսպէս ուրեմն այն անել լարիւրինթոսին մէջ անցք մը բանալու աշխատութեան վրայ՝ կ'աւելնար Տաստաղոսի տանջանքն ալ, զիտնալով թէ հիմապի տեսարանի մը մէջ պաշարուած ենք եւ չենք կարող վայելել զայն:

Քիտրոյայէն վեր, ուր երկրորդ օրն գիշերեցինք, ապրիլ 30ին, լեռներն կը շարունակեն գեւ շրջապատելու զհովիտն, ուստի անցանք դէպ յարեւմուտք, ոչ շատ բարձր կիրճէ մը: Ի մուտս անցքին, ճամբան կը խոտորի քսան ոտքէ աւելի խոր հեղեղատի մ'եղելըքէն, որ գրեթէ շիտակ գծով

վեր կը բարձրանայ. ոտոր մէջն ինկաւ մեր գրաստներէն մէկն, հարկը քառասուն լիւպրէ ծանրութեամբ սնաւկով մը: Այս մեծարգի սնաւկն՝ որուն մէջն էին ճայթող ուռմիներն, դարձեալ բարեբաղդաբար անվնաս ջրէն հանուեցաւ գրատիկն հետ:

Կրճին վերջի մասին ճամբան՝ սաստիկ սաչուն է եւ աւաղի եւ որձաբարի ժայռերու վրայ կը հանէ, որոնց գագաթունքն ծառերով պսակուած, երեք հարիւր ոտք բարձրութենէն վրանիս կը տիրէին. վերջն՝ իւզային եւ կարմիր կուտով պատած սեպագիւղ գառ ի վայր մը՝ վերտօնի Լուճէրէն՝ ձէրի հովիտն հանց զմեզ:

Ի հարաւոյ՝ Քիկամպուէի լեռներով շրջապատեալ, ուսից բազմաթիւ հեղեղներ կ'իջնեն անցընելով զգետը, եւ ի հիւսիսոյ՝ առանձին առանձին կոնաձե բլուրներու շարքով պատեալ՝ շատ բարեբար է հովիտն եւ կը ներկայացնէ ինկաներու, մեծամեծ անտառներու, խոտեղինտեղ եւ մշակութեան բազմաբնուէն հետըհետէ յաջորդէ մը. բայց Քիկամպուէի լեռանց հեղեղներն, սպառնալով շարունակ բնակչաց ապահովութեանը, զգալի կերպով այս օգտակարութիւնները կը նուազեցընեն:

Այս ջուրի հեղեղատներէն մէկն՝ Մօհալէ, յորդութեան ժամանակ՝ մոռնէ մ'աւելի լայնութիւն պիտի ունենայ. նաեւ այն օրերն, երբ մենք անոր մէջն անցանք, երեք ոտք խորութեամբ գնալազան առուակներ կ'ընթանային սրամպուի մացառներու մէջէն, որք գետին անկողնոյն մէջ այսր անգոր կը գտնուէին:

Հեղեղատին համանուն Մօհալէ գիւղին մէջ գիւղերէն ետեւ, որ նոյն գետին վրայ շինուած է, հետեւեալ օրն հասանք ի Սիմպուտէնի, Քիգրապէնկոյի հին բնակարանն, որ մերձաւոր ցեղերուն սարսափ մ'եղաւ: Սակայն Աշիւի՝ ըսուած քերիկն փառք՝ հիմայ մարած է, եւ մենք զորջիս բաց՝ անցանք անկէ, առանց պատասխան տալու արդի ցեղապետին պահանջմանցն, որ ծովու հին աւազակապետի աղջիկ մ'է, որ թէպէտ կ'ուզէ՝ բայց կարող չէ իրեն հօրը պէս ուրիշին վնաս հասցընել:

1 Սիմպուտէնի անուան բառական իմաստն է: Իսկ քաղաքին նկարագիրն եւ կործանուած՝ Սիմպուտէնի երկաթիւրութեան մէջ կը գտնուի: (Ինչո՞ք գայ լիւիւիւրն):

1 Թաչուն մը՝ որ մեղաներուն փեթակները գտնելու կ'առաջնորդէ:

Մուէրէ պատիկ հեղեղասան անցնելէն ետեւ, դատեք զԼուճէրէնճէրի: Այս տեղէն հաղիթ էր յորս կամ Հինգ տար խորութիւն ունի, և վաթսուն լայնութիւն, բայց անոր հզերքն՝ տասնուչորս տոնայափ բարձր էին ջուրին երեսէն: Ինկած ծառերէ կամուրջ մը գտանք և անոր վրայէն անցանք:

Բայց մեր մարդիկն, որոնք փափաքեցան քաղերին կողմը կենալ, չուզեցին սիրով գետէն անցնիլ, և երկու ժամէն աւելի պէտք եղաւ մեզի՝ ինչուան որ կարաւանին վերջին մասն և վերջին գոտսը գետին միւս եզերքն անցան: Միով բանիւ, ամենայն յաջողութեամբ անցանք, միայն ռաստրի վախի զգալուն կրելով: Բեռնակիր մը չվրտահանալով սահուն կամրջին վրայ, ընդ որ կանցնէին այլք, փորձեց ծանծաղէն անցնիլ, և հեղեղն զինք տարաւ: Բայց երբոր կորսուած կը կարծուէր, ողջ դուրս հանուեցաւ, և ջրոյ մէջ ինկնալուն ձախորդ արգասիքն իրեն յանձնուած պաշարեղինաց թրջին եղաւ:

Համիս բանակէր էր յանդգաստան Մուէրէին եզերքը: Այս անխոհեմութեան համար ստիպեցաւ տասնուօթիս տող վճարել Քիզապէնկօյի աղկին: Ետեւ մը ուսկէ ազատեցանք մենք՝ անցնելով ընդ Լուճէրէնճէրի:

Մաքադայ դաշտավայրն զիմացնիս կը տարածուէր, որ տղմուտ անապատ մ'է: Չայն կտրել անցնելու համար՝ ստիպեցանք պաշար պատրաստել: և այս գործողութիւնս բանակել տուաւ մեզի գետին եզերքն, և հետեւեալ օրն ալ ամբողջ գողցաւ մեզմէ: Լուճէրէնճէրի հովտէն աւելի բարեբեր գաւառ չկայ: Տեղացիք բազմութեամբ հօն վազեցին մեզի ցորեն, լոբիա, դդուռ, խաղող և ուրիշ բաներ վաճառելու համար: Երով առանց գծուարութեան պաշար պատրաստեցինք:

Համիս՝ ջրհեղեղային անձրեւէ մը նեղուած, կէս օրուան դէմ մեզի այցելութեան եկաւ: Տիւրն, զայցելուն զուարճացնելու համար, և միանգամայն զարմացնելու դիտմամբ, ճարտար արագաշարժութեամբ քանի մը թուրջի խաղիկ բրաւ: Բայց Համիս, ի մեծ զարմանս մեր, ցուցուց թէ ինքն աւելի ճարտար է յայտմ մասին:

Իմ վրանիս վրայ ծառի ճիւղ մ'ինկնելով, երկու մեղրէն աւելի պատռեցաւ: Եւ թէ ի Քիբոդա եղած ժամանակս՝ զայն աս

տառաւ պատելու հոգ տարած չըլլայի՝ պիտի ստիպուէի Տիւրնէն ապաստանարան մը խնդրել, իւր հապէշական վրանին մէջ:

Երկրորդ օրն ուղեորն ընդ ժամանակ հազար վիշտք, հազար նեղութիւնք կային զլուխնիս գալիք: մարդիկ՝ կշտապինք յազեալ ըլլալով՝ դժուար կու գար իրենց ուղեորին: ուղեցին զեռ քանի մ'օր այն առաստ երկրին մէջ անցնել:

Ստիպուեցանք գանտք մէկիկ մէկիկ բանակի տղէն դուրս վաճնել, և հազիւ թէ կռնակնիս ետ կը դարձնէինք, անոնք նորէն չընդապտին մէջ կը դառնային, և կամ բարձր խտերու մէջ կը ծածկուէին: Սակայն անխոհեմութեան զօրութեամբ յաջողեցանք վերջնական ուղեորելու: Քիզնոտոյի շղթայի ծայրէն անցնելով, որ ութ հարկեր ուր բարձրութեամբ զարհուրելի կերպով դաշտավայրի մը խորէն վեր կը ցցուի, հասանք ի Սիմայօ: Բովանդակ այն տեղերն ուր ջրհորներ կը գտնուին, և ուր տեղ ջուր ունենալու համար՝ բաւական է քիչ խորութեամբ երկիր փորել, այս Սիմայօ անունը վրանին կը կրեն, որ աւելի ընդհանուր անուն է՝ քան թէ յատուկ: Սիմայօ, որուն վրայ Հիմա կը խօսինք, հանգչելու տեղ մ'է, յորում վերջին անգամ մ'ալ կարաւանք կը կենան, Մաքադայի անցքին դժուարութեանց դէմ երթալէն յառաջ:

Այս ճախճախոտ դաշտավայրին նկատմամբ այնպիսի ծայրին կը լռուէին, որոնք անվաս օրտերն անվամբ կրնային յետս կեցնել, եթէ ճանչցած չըլլայինք սեւամորթերուն բերումը առ չափազանցութիւն:

Քիզնոտոյի շղթան՝ երթալով կը միանայ Քիկամպուէի շղթային ծայրին հետ: և այս երկու շղթաներուն միութենէն ձևացած անկիւնէն կը բղխեն Լուճէրէնճէրի աղբիւրներն:

Աչքէ անցնելով բեռնակրաց յանձնուած բեռն իմացայ թէ ծրար մը կը պակսէր. և անշուշտ Ուէհտի անունով մէկունէր՝ որ զինք և կ'ալ կարասեօք դասալիք եղած էր: Հինգ զինուոր զրկեցի խկոյն փախչողին ճամբուն վրայ, որք յանցաւորին հետ իրիկուան դէմ վերադարձան: Սիմպուէնի գտեր էին զինքը, ուր ապաւինած էր. կարծնով անշուշտ, թէ մեր հարկ վճարելով՝ ինքն աղէկ ընդունելութիւն պիտի գտնէր այն տեղ, բայց կը խաբուէր: Քաշաղզի աղջիկն Քիզապէնկօ, իմ՝ զնդիս զլիաւորին

ձեռքը տուաւ զայն հանդերձ կահիքն, եօթն տօգ միայն 'ի տուգանս անկէ հանելով՝ մեր հարկ չհատուցանելուն համար:

Քանի մը գաւաղան զարնել տուի Ուլէտիին, որ խրատ ըլլայ այլոց. բոլոր իւր ընկերակիցքն՝ իրաւացի դատեցին այն պատիժը: Զամբուն այս կէտերուն վրայ գաւաղք ըլլալն՝ անպատիւ գործ սեպուած չէ, բայց փախչողն պատիւը պահած կ'ըլլայ, եթէ իրեն յանձնուած բեռը չգողնայ:

ԳԼՈՒԽ Դ.

Մաքադայի ճախճախուտն: — Համանուն գետն: — Տեղացւոյ շինած կամուրջն: — Անցք դրաստուց: — Ռէհէնէքօ: — Հանգիստ: — Այց-եշուք: — Պարծենկոտ մը: — Մուրֆիին լուրերն: — Իւր գալուստն: — Արշաւանաց ուժն: — Կանայք ու գերիներ: — Կորուստ մարդ. կանց: — Պատերազմի պատրաստութիւն: — Ծուռք և էշք:

Ամսոյն 26ին՝ ճամբայ ելանք 'ի Սիմպոէ՝ գէպ 'ի վախճալու տեղն, յընդարձակ դաշտավայրն, որ Ուզակարայի լեռներէն կը ձգուի մինչև Սիմպատէնի շրջակայքը: Զորութեան ժամանակ՝ ամենեւին խորքեր չկայ. բայց անձրեւներու ատեն՝ տղմուտ ընդարձակութիւն մ'է և գէպ յարեմուտը երկու կամ երեք ճահիճներ են, յորոց անցին՝ ամենազօտար է:

Սնտառախտ և ախորժելի երկրի մը մէջէն երկու ժամ ճամբայ ընելով, որոյ հողն կարմիր և աւազուտ է, այս դաշտավայրիս մէջ հասանք, որ ամենատխտուր տեսարան մ'առջենիս բացաւ: Փիղերու, ընձուղտներու և գոմէշներու անցուգարձն՝ լոյծ կաւոյն մէջ բազմաթիւ փոռեր փորած էին, որոնց մէջ մինչև ծնկաչափ ջուր կը բարձրանար, և զրաստուց համար՝ իրաւցրէն որոգայթներ էին: Այն թշուառ կենդանիներէն մէկն գրեթէ խղճուկեցաւ բուն իրեն տիրոջ ձեռքով, որ այս գութերէն մէկուն մէջէն վեր հանելու համար՝ չարժաւան կապ մ'անցուցեր էր անոր վիզը:

Հինգ ժամ քալումէ՛ր հինգ մղոն ընելու համար. հինգ ժամ յորդ անձրեւով հանդերձ, և անոնց չարունակութեան ժամանակ հարկ եղաւ դրաստները գուրս քաշել, և անոնց բեռներուն վեր հանելուն և վար առնուելուն ուշադրութիւն ընել. այս աշխատու-

թեան փոյթ ունենալ, և մարդիկը միշտ յառաջ մղել, որոնք տղմի մէջ կ'ուզէին մնալ, ուր ոչ ատաղձ պիտի ունենային՝ վրան չի նետու համար, և ոչ կրակ ունենալու համար վառելիք:

Տղմի մէջ կենան ատանց ծածկոցի, և ցուրտ անձրեւի տակ՝ իրենց համար մահաոխիթ պիտի ըլլար: Զանազն ուրեմն յառաջ տանել զանոնք, մինչև որ կէս օրուան ծամն երբեք, համեմատութեամբ չոր գիրքի մը վրայ գտանք թէ՛ բանակ դնելու տեղ և թէ՛ կրակ վառելու համար նիւթեր:

Բոլոր գիւերն անձրեւ եկաւ. բայց արշաւըսը ծագելուն պէս երկինքը պարզեցաւ: Ժամն ութին դարձեալ սկսանք ընթացքիս շիտակ երկրի մը վրայ, ուր կը բարձրանաւ յին քանի մը արմաւենիներ, — պօրաստոն ակունք (borassus flabelliformis), — և տիգիս առջի օրուան պէս պինդ չէր:

Վախակէն ծամ մը հեռու՝ ջրոյ փոքրիկ առուակի մը հանդիպեցանք, որ ճախճախուտի մը թորմամբն անելով՝ կը թափուէր 'ի Մաքադայ. և ծանծաղ տեղէ մ'անցանք ընդ այն. յետոյ ստիպուեցանք ուրիշ մ'ալ կտրել անցնիլ, որ ծանծաղ չունէր ամենեւին:

Ռաձգական նաւակն, որ ամենամեծ օգնութիւն պիտի ընէր մեզի՝ մօտ քովերնիս չէր. այն մարդն որ իրեն վրայ կը կրէր զայն՝ գէպ 'ի վեր գացեր էր ծանծաղ տեղ մը գտնելու համար: Մարդ զրկեցի փընտեղու զինքը, բայց երկայն ատեն սպասելէն ետքը՝ Տիլլոն և ես 'ի ջուր մօտանք լողալ չգիտցողներուն օգնելու համար, կըրկին և կրկին անցնելով:

Վերջապէս նաւակն հոսաւ, և կահ կարասիքը փոխադրելու գործանկցինք զայն: Իմ արկղներէս մէկուն հանդիպելով՝ փութացի ճերմակեղէն և զգեստներու փոխել. գծադղաբար Տիլլոն չուզեց իմ օրինակիս հետեւիլ, և թրջած կեցաւ, որով և պաղ առաւ:

Յարդի չիզեր և խոտերու կտորուանք գետեղբայրին ծառի ճիւղերուն վրայ պըլլուած և տասն ոտք ջուրին երեսէն բարձր կը ցուցնէին թէ ողորմունքն ինչ աստիճան կը ծածկէ երբեմն այն երկիրը:

Կէս ժամ քալելէն ետքը՝ Մաքադային եղիւրն հասանք. բազմամուր ցետ մ'է այս, հարիւր քան տօգ լայն, և ութ կամ ինն ոտք խորութեամբ:

Հրապարակու ճիւղերն և բուններ՝ յիմաններու
հետ միացած, և մեծամեծ ճիւղերու վրայ
կոթընած, երազութեամբ պտուտակելով
ի ներքոյ ջրոյն, մէկ եղերքէն միւս եղերք
կ'ընթանային, և կը զիղուէին նոյն տեսակ
նիւթոց վրայ: Տիգրացոց մտացն համեմատ,
այս գեղջկային կամուրջն, որ այն ատեն
գրեթէ յորձանապտոյտ ջրոյն տակ էր, շատ
աղէկ կրնար ծառայել երկրտունիներու
համար: Բայց ոչ թէ մեր գրաստուց, որը
իբրև բուռն գրեթէ այնպէս քորչուեցան,
յայտնի տեղեւորութիւն ցուցնելով:

Ատոնցմէ իւրաքանչիւրն ըստ կարգի գետ
եղերքին բարձրութենէն ջրերին մէջ նե-
տուեցան, և քսան կորովի բաղուկներէ
քաշուելով միւս եղերքն հանուեցան, ու-
րած չուանի մ'օգնութեամբ, զոր խեղճ
կենդանեաց վիղն անցուցեր էին: Այս իսկ
չէր կրնար արգելել զանոնք ընկղմելէն և
աներևոյթ ըլլալէն՝ ինչուան որ դուրս ա-
փուքն ելլէին:

Հարկւր քայլ հեռու գետեղերքէն՝ բա-
նակնիս գրինք: Ողն աղէկ ըլլալով, փութա-
ցինք բեռանց ծորաները չորցնել: Բայց
գիշերն յորդ անձրև մը կեցած տեղերնիս
լիճ դարձուց: Կամուրջն շատ վեր բար-
ձրացուց զգետը, և բովանդակ մեր աղին
դարձնալ թրջեցաւ:

Հետեւեալ ընթացքներնուս մէջ ճամբան
գէպ ի դաշտավայրի մը խոտորեցաւ, որ
աւելի բարձր ըլլալուն պատճառաւ չոր էր:
Քաղցրութիւն արմաւենիներ մասնաւոր կեր-
պով նշանաւոր կ'ընէին զայն¹: Կուգ մ'ու-
նէին այս արմաւենիք իրենց բունին մէջ
տեղն, որ չվարժողի մ'աչքին՝ տարօրինակ
բան կ'երևայ:

Նշանաւոր է նոյնպէս վայրի կենդանեաց
հետոց շատութիւնն՝ որ գետինը կը ծած-
կեն, և այնպիսի կերպով շարունակուած
հետքեր, որ կարաւանէն բաժնուած ըլլա-
լով՝ շփոթեցին զիս բուն ճամբէս, և կէս

1 « Մաքադայի գաշտավայրին մէջ եղած միակ
նշանաւոր ծառն զոր կը նկարագրէ Սթանլէյ, է
գորաւուս ճիւղայն: քանի մը տեղեր այնչափ
բազմաթիւ է որ կրնայ անտառ ըսուիլ: Ասկէ
գատ, այս գաշտավայրին մէջն ուրիշ զատ չուն-
նուի, բայց թմէ փշալոյց ծառերու գանազան
տեսակներ, որոնք սովորական են, և Միմոզա
թափախ (mimosa parasole) ըսուած ծառն, ու
բուն գեղեցիկ կատարն շնորհալար է ու (իւր
դէպ փոքր չէ ինչպիսիք): »

մղոնի չափ առաջ գնացի, մինչև որ զգա-
ցի սխալմունքս:

Մքովայնկա ըսուած գիւղի մը մօտ հան-
գիստ առինք, ուր Տիլլոն առաջին անգամ
ջերմ ունեցաւ, որ անշուշտ Մաքադայէն
առաջ եղած գետն անցնելու ժամանակ եր-
կայն տառն ջրի մէջ կ'ենալէն պատճա-
ռեալ էր: Իսկ ես յաջ ոտքս այնպիսի ցաւ
մ'ունեցայ՝ որ շարժելն անկարելի էր:

Որ մը հանգիստ ընելով հանգերձ, ոչ
ես և ոչ ինքն առողջացանք: Բայց լսած-
նուս համեմատ, համարելով թէ մարդը օգ-
ունի Ռէհէնէքօ, կարևոր գատեցինք այն
առողջարար տեղն հասնիլ: Ուղեորեցանք,
մտքերնիս զնելով որ երկու օթեւանով
լինցնենք այն միջոցը:

Սաստիկ կը նեղուէի, ոչ միայն քաղե-
լով այլ նաև թամբի վրայ նստելով: համա-
րով մը զիս կրել տուի, մինչդեռ ընկերս իւր
գրաստին վրայ հիծաւ: Ծերացած գրաստ
մը, որոյ անունն կը կոչուէր ֆիլիսոփայ,
իւր հանդարտաբարոյութեանն համար, ու-
րով սիրով կը համբերէր ճամբուն ամեն
յեղափոխութիւններուն: և շտապեցինք
հասնելու փոքրիկ աւան մը, որ Բուժ
պէհնիս անուամբ գլխաւորի մը կը պատ-
կանէր, և այդ տեղ գիշերն անցուցինք:
Բայց առատուուն Տիլլոն սաստիկ ծանրա-
ցած էր և չէր կրնար գրաստին վրայ նստիլ:
և որովհետեւ համար մը միայն ունէինք՝ որոշ
չեցինք որ յառաջ ես մեկնիմ և յետոյ ըն-
կերս:

Համբուն վրայ մէկ քանի մեծամեծ գե-
ղերու հանգիստեցանք, որով կրցանք իմա-
նալ երկրին ընդարձակ մշակութեան պատ-
ճառը: Բաց ի քանի մը կէտերէ, որք լճա-
յին էին կամ բոլորովին ողողուած, ինչ-
պէս մեզմէ գտած երկու տեղեր, արտոր-
ններէ գատ ուրիշ բան չի տեսներ: Զրով
ողողուած տեղերն՝ իւրաքանչիւրն մղոնի
մ'երեք քառորդ լայնութիւն ունէին, և
երկուքէն ինչուան երեք ոտք ջրով ծած-
կուած էին:

Հասնելուս պէս՝ հաստատեցի իմ բնա-
կութիւնս հանգիստ կերպով գլխաւորին
վերանային տակ: յետոյ մարդ զրկեցի
ԿՏիլլոն առնելու համար:

Ռէհէնէքօ՝ բազմամարդ գնլ մ'է: հօն
անմիջապէս ապաւն և աղէկ զգեստաւորած
բազմութիւն մը զիս պաշտօնեցին, որոնք
Զանգիպարի գերեաց պէս դարդարուած

էին. նորօրինակ վնոց մ'ունէին, պղնձի թելով Հիւստոն մանեակ մը. այս մանեակս որ Հորիզոնական գիրքով վերնուն չորս կողմէն դուրս ցցուած է, երբեմն երկու ոտք երկայն տրամագիծ ունի, և այն պատկերները կը յիշեցնէ, յորտ 'ի սկսածուսկի նկարուած է Յովհաննու Մկրտչի գլուխը: Այս նեղացուցիչ դարգարանքը՝ միայն 'ի Ռէհէնէնէք տեսեր եմ. բայց կ'ըսէին թէ բոլոր այն շրջակայից նորաձեւութիւնն է:

Չորակի մը մէջ 'ի մուսու կրճի, որ Ուղակի մը լեռները կը հանէ, կանգնուած ըլլալով աւան՝ կենտրոն յարմար չինքացաւ ինծի. ուստի վրանս ուրիշ մերձաւոր բարձրաւանդակի մը վրայ հաստատուել տուի: Հինգ կամ վեց անձիք միայն քնացան այն վրաններուն տակ, որք մեզի համար չինուած էին: Այլք՝ կրակին մօտ կեցան, տնամարձակելով իրարմէ բաժնուիլ, սաստիկ դարձուած ըլլալով վայրի գաղանձերէն:

Եւ այս վախն այն աստիճան հասաւ, որ նոյն իրիկունն արեւը մտնելէն վերջը ջրոյ կարօտութիւն ունենալով, չկրցայ ամենեւին համոզել այն ծոյլերէն և ոչ զոք, որ երթայ առուակէն ջուր բերէ, որ և ոչ իսկ շորս հարիւր մէքդ հետու էր մեզմէ:

Երկրորդ օրն հասաւ Տիւրն, դեռ աւելի ծանրացած, որով ստիպուեցայ բանակը հաստատելու, գուշակելով թէ երկայն ծամանակ հանգիստ պիտի ընէիք: Կարաւանին խրճիթներէ կաղնուած շրջապատին մէջ ցցապատ պատնէշ մը կը պատէր մեր վրանը, զպահպան գունդն և շտեմարանները: Շրջապատին և խրճիթներուն մէջ եղած միջոցն՝ զրաստուց ախոռի տեղ ծառայեց, զորս օրերով արձակ թողուցեր էինք մարգագետիններու մէջ, երկու մարդու պահպանութեան ներքե:

Ջերման հետ մէկտեղ՝ Տիւրն թանէ բըռնուցաւ, որ երեք շաբաթ դիմքը ստիպեց անկողին կենալու, այսինքն մայիսի երկուքէն մինչև 'ի քսան. ես միշտ կը կապայի, ոտքիս ուռածութիւնը մեծ պալարէ մը առաջ գալով: Չարագոյնն եղաւ՝ որ բռնակիրներն գործէ ետ կեցան. կերակրոյ տեղ, որ իրենց կու տայինք, կերպաս կ'ուզէին, և ամեն ինչ օր՝ կանգուն մը բամբակի խոշոր կտաւ ունենալ. արգ ես այս դիմով տասնուհինգ օրուան ռոճիկ կը գնէի: Տեղի տալ անկարելի էր. պէտք էր գէմ կենալ, վտան

գաւ գաստըութիւնը գրգռելու, ապա թէ ոչ շուտ մը մեր բամբակեղէն ստացուաճըր պիտի լինար:

Ահաւաստի իմ առօրեայ կեանքս, երբոր Տիւրն հիւանդ էր, Առաւօտն, գազաօն առնելէս վերջը, իմ շրջանս կ'ընէի, քաջքելով դիւ. հէքուն այցելութիւն կ'ընէի. թէ որ վերջ ունէին, փենական ձիթով կը դարմանէի դանոնք, և կը հսկէի որ ամենքն արածելու տարուին: Յետոյ մարդիկներն աչքէ կ'անցընէի, կը քննէի զէնքերն, տրտունջն. բոլորի կ'ընէի, Այլեւ կու տայի բանակը, բաժնիւ ռոճիկներն. մօտիկ գեղերը գունդեր կը զրկէի՝ երկրորդ օրուան ապրուստ գնելու համար: Այսպէս նախաճաշի ժամը կու գար. կերակուրը լմաւորն պէս, կը գրէի. յետոյ կը սկսէի ախաւսիլ, և քանի մը մանր գործողութիւններով մինչև 'ի ճաշը կ'անցունէի: Վերջը, տեսարան մը կը նկարէի, ծխափող մը կը ծխէր բանակին կրակի մը քով, և երբոր վերջին ծուխը կը ցնդէր, անկողին կը դառնայի:

Երբեմն այցելուի մը գալուստն այս միշտ համաձե կենաց միակերպութիւնը կ'ընդհատէր: Ֆէրհան անունով մէկը, որ մի և նոյն ժամանակ Արաբացոյ մը գերին էր և մեծ գեղի մը գլուխ, օր մ'ենաւ իր մեծարանքն ընելու, այժ մը և քանի մը հաւ ընծայելով: Սաիտ Սիւլէյման իրեն տէրը, Չանդալարի Սուլդանին երկու նախորդաց պաշտօնեայ եղած էր, որուն ինքը խորհրդալան էր: Ուրիշ անգամ մը, Սէիտ Իպն Օմար, Օմանի հաստատուած 'ի Մպուսէ, զրկեց մեզի իրեն որդին՝ պարգե մը բերելու, և ներուռն խնդրելու որ չկրնար անձամբ գալ իրեն հպատակութիւնը յայտնելու, հիւանդութենէ արդիւրած ըլլալով:

Ասոնք եղան երկու սրբեկական այցելութիւնք. այլ երրորդ այցելուն, դուռը և սնապարծ խառնածին մը, մուս սպառնալից, ուզելով որ իրեն ձեռքը տրուի բակագի մը, որ իբր թէ, երկու ինքը տարուընէ 'ի վր իրեն պարտապան էր: Երկու կողմն ալ քննեցի: Արովհետեւ բակապին կը ցուցընէր թէ այն խառնածինն պարտք մը չունի, արդիլեցի որ գինքը բռնէ. այն ատեն խորտապանձը բանակէն դուրս ցատկեց, առանց իմ ողջունիս պատասխանելու:

Այս գաղաբման ատեն, բոլոր իւրց համակները նորոգեցի, և լաւաւոր ձեւով բարձիկ մը հնարեցի, բարձիկ որ եթէ ա-

եւ ի հաստատուն նիւթերով շինած ըլլայի, Սիրիկէն կը կտրէր կ'անցնէր: Իւրաքանչիւր համետ կաղնուցաւ երկու թանգէ, կուրծքին վրայ անցնելու կաշեայ գոտիէ մը, չուանէ մը, նոր փոկէ մը, և համետին ծայրը զննելու և վերցնելու համար քանի մը ճանկեր՝ դիրացուցին անմիջապէս բեռը վերցնելու և վերստին զննելու:

Եօթն էջ սապատներ ունէին. պատերազմի կարեւորներն, բոլոր հրացանից աւելորդներն՝ անոնց մէջ կը դրուէին, և իրենց ծառայութիւնն աղէկ բրած կ'ըլլային, թէ որ աւելի զօրաւոր ըլլային: Բայց մենք ծանրերը ընտնէր անոնց մէջ կը զետեղէինք. որոնց վրայ աւելնալով նաև այս սապատներուն անդադար առդին անդին զարնուին, այնպէս նուազեցուց անոնց բնական տևողութիւնն, որ և ոչ մէկը Դանկանիքայէն անդին գնաց:

Ժամանակն ինծի երկայն կ'երևար. ան հանգարտ էի Մուրֆիին վրայօք: Շատ անգամ իրեն զիմաց մարդ զրկեր էի, և ինծի իրմէ լուր մը չէր հասած: Վերջապէս 'ի 20 մայիսի, 16ին գրուած նամակ մ'ընդունեցայ: Մուրֆի ինծի կ'ըսէր՝ թէ ջրով ունեցեր էր, որ երբեմն երբեմն կը գառնար: Թէ Մօֆֆադ ալ միշտ ջրովնոտ է, և երկուքն ալ ամենատկար էին:

Թէպէտ և շատ ջանացի Մուրֆիին հետ հաղորդակցութիւն ընելու, բայց ալ ուրիշ բան չգիտցայ: Բայց 26ին կարաւան մը երևցաւ: Սևաղէմամբոխին մէջէն ճերմակ երևաւ մը կ'երևար, մէկ միայն:

« Ո՛ր է միւսն », շրթունքէս ելած աղաղակն այս եղաւ. « ո՛վ կը պակսի »:

Բազմութիւնը կը մօտենար: Յուսոյ անձկութեանս ալ չկարենալով դիմանալ, ընդ քարշ զնացի բլրոյն ոտքը, ուր ճանչցայ զՄուրֆի:

« Իսկ Մօֆֆադ », աղաղակեցի:

— « Մեռաւ » պատասխանեցին ինծի:

Կիսմային զոհ եղած մեներ էր, Սիմպլոյէն երկու ժամ հեռու: Արմատենոյ մը տակ կը հանգչի, Մորադա դաշտին սկիզբը: Իր անունն Ալիբիկէի հետազոտութեան նահատակաց փառաւոր կարգը կ'երկնցնէ, նահատակութիւն՝ յորում 'ի վեր երևին աւնուանք Մարէնդի, Դիննէի, Մոնկոյ Բարքս, Վան տեր Տէբէնի, Թօրնդոնի... Չէի գիտեր որ իր հօրեղբայրն արդէն այս սգաւոր ցանկին մէջ գրուած ըլլայ:

Ողորմ Մօֆֆադ. եկած էր 'ի Պակամոյոյ լի յուտով, ներշնչմամբ, հաւատով ապագային մէջ: Ինծի կ'ըսէր, թէ այն օրն յորում զիտցեր էր թէ իրեն շնորհեալ է մեղի հետ միանալու, իր կենացն ամենէն աւելի երջանկազոյն օրն եղած էր:

Մուրֆիի գնդին յետին մասն երկրորդ օրն հասաւ: Հազիւ բեռները վար առինք, մեր նիւթերուն պահապանին՝ Խոսային օգնութեամբ, բոլոր բեռները քննեցի, և նշանեցի ինչ որ կը բով: նդակին, պէտք եղած բաները շուտ գտնելու համար:

Մուրֆի քիթին առնելու անհոգ եղած ըլլալով, միշտ ջրմմն ունէր, և դիրքն չէր զինքը մեզի հետ տանիլ: Շատ ծանրամարմին ըլլալով, իրեն համար սէտք էր չորս բեռակրաց երեք փոփոխմունք. արդէն շատ տկար էին մեր տեղափոխութեան միջոցը. առջի օրուան դարձած էշերէն և ոչ մէկը կրնար ծառայել, այնչափ ուժաթափ էին: Եւ մեր յառաջատեսութիւնն — Խոսային և իմս — խիստ փորձոյ մէջ դրուած էին:

Կարաւանն այն օրերը բոլորը մէկտեղ՝ երկու հարկուր քառասուն և հինգ անձինք կը համարէր:

Տիլոն, Մուրֆի և ես.

Խոսա, նիւթական կարեւորաց գլուխը.

Չինուորք 35, հանդերձ Պոմպայիւ, որ անոնց իբր թէ կը հրամայէր.

Բեռնակիրք 192, ծառայք 9, և պատանեակք 3:

Ունէինք նաև քսանհինգ էշ և երեք շուն: Փանի մը մարդիկ ունէին հետերնին երկու սեռէ գերիներ, և իբրև թիւ՝ նշանաւոր էր ուղէգնացութիւնը:

Ալ աւելի բազմաթիւ կ'ըլլար. բայց բաց 'ի զինուորի մը մեռնելէն, երեսունութ բեռնակիրք դասալիք եղան: Չիամպա կունէրայի մէջ էլ մը կորսնցուցինք. և ուրիշ մը՝ ընկերով մը աքացիէն կաղացած ըլլալով, 'ի Պակամոյոյ թողուեցաւ:

Պատարագմական գործնաց կողմանէ՝ իւրաքանչիւրնիս ունէինք, Տիլոն և ես, բաց յանուար առքնակներէ, կրկնահարուած փփր մը թ. 12, նոյն չափով՝ որսոյ հրացան մը, աղէկ գէներ, երկուքն ալ լանկէն շինուած: Մուրֆի ունէր կրկնահարուած հրացան մը թ. 10, և լանկի թ. 12 մը, զոր զենք էր խեղճ Մօֆֆադ 'ի Զանդիպար:

Աջարներն երեսուն և երկու սկիտերով և նաւական զորաց վեց հրացանով զինուած էին: Իստա, Պոմպայ և Պլալ՝ անուաւոր ատրճանակ կը կրէին: Նաև շատ բակաղիներ գաղղիական և անգղիական շինուած հրացաններ և քարալոյց տորճանակներ ունէին, որ պատերազմական հին գործիներ էին: Անոնք որ հրազէնք չունէին, նիզակ կը ճօճէին, կամ աղեղ և նետ կը գործածէին:

Մեկնելէն առաջ, ամեն էջերուն խնամով ընտրուած անուններ գրուեցան. բայց միայն Տիլլոնի և Իմ֊Փրիստփայ և Յոհաննա լինա՝ էջերն եղան որ այն անուամբք պահեցին:

Երեք չունեն — մեր զուարճութիւնը — կը կոչուէին Լէօ, Մապէ և Ռիքսի: Լէօ, Իմ առանձին բարեկամս և Իմ ստացուածքս, 'ի Զանդիպար գներ էի: Մեծղի կենդանի, հասարակ ցեղէ և ոչ նշանակեալ, հասաւ կովն և տեսքովը կը զարմացնէր տեղացիքը:

Մապէ կամ Մէյ, պոյ—դէրրիյը (բարակ որսական), Զանդիպարի Գերմանիոյ հիւպատին՝ Հիւլձի ընծայ մ'էր առ Տիլլոն. իսկ Ռիքսի, գեղեցիկ կարճոտն աղուեսաւ յին շուն մը, երկայն, թաւ, և խայտաճաւ մով յազերով, զոր Մուրֆի Ատէն ունեցեր էր:

Ի 20 մայիսի, ամենայն պատրաստութիւնք լինեցած էին, և կը յուսայինք երկրորդ օրը ճամբայ ելլել: Մուրֆի ջերմէն չէր ազատած. ես կը կազայի. բոյց Տիլլոն բոլորովին առողջացած էր, և լի յուսով մեկնեցանք:

ԳԼՈՒԽ Ե.

Բակազներուն անձնասիրութիւնն: — Ապառաժուտ կիճ՝ մը: — Բանակեալ զառ 'ի վայրի մը վրայ: — Մըւրացիականութիւն: — Մերմաւ պոյ: — Բարձրորեն ծառք: — Էրկանէն ծեծ: Ծուած կին: — Երկգլխի խոտք և անոր հետեանքը: — Բախտախնդրութիւն: — Այլ և այլ կարաւանաց առ մեզ հասնելն: — Փղաց որսորդ մը: — Սրտաձնիկի տեսարան: — Դիւրեղեղ կամ չուտադնապաւ: — Զորանուա երկիր: — Յանգի թուլանէ մեռնող: — Ճշմարիտ հաւատացելոյ մը եղանակ վարդապետութիւնն: — Դէմպէ: — Վրաստիբիկոյ: — Պատերազմող ցեղ մը: — Շունձք: — Իրաւն շուրք: — Մարեկաւ—Աքալի: — Վրասիկոյ:

Մայիս 30ին առաւօտն, մեկնելու առնն, փողանշանին ժամանակ՝ բակազներէն ու մանք կը պակսէին. հինգ անձինք դասայիք

եղեր էին: Այս վերջիններուն մէջ էր այն զոր խառնաղգոյն չէի յանձնած, որ բողոքեր էր պարտուց համար:

Գործ չտեսնելու համար ամիս մը մարդ պահելէն ետքը, կը նեղանայի աշխատութեան ժամանակ զանոնք կորսնցնելու, և ճամբուն համար թուական ընդունենէն վերջը:

Անհամբերութեան ուրիշ պատճառ. թէպէտ և ջանացի իւրաքանչիւրին յարմար բռն ողողելու, սակայն ամենքն ալ յարձրեցան դիւրատար բռնաց վրայ, աւելի թիթեալացոյն մ'ունենալու քան այն բռնարէն որ համեմատութեամբ 'ի կարաւանին աւելի բարձր աստիճանի կը համարուէին. չուոյն կարգն այսպէս կանոնաւորեալ ըլլալով՝ նախ վրաններն, ապա մետաղական թերն, կիւրպան, գունաւոր ապակիք, և մենէն վերջ՝ սնտուկներն, խոհակերոցի կահ կարասիքն և ուրիշ բաներ:

Շատ ճգամը և շատ յարատուութեամբ ամենայն դժուարութիւնք հարթեցան. այլ ճամբայ ելլելը տասնէն առաջ չեղաւ:

Ապառաժուտ կրճի մը մէջ ճամբան կը սողայ, յետոյ, այսպէս ըսեմ, լերան մը սեւապցեալ զառ 'ի վայրին վրայէն վեր կ'ելլէ, վերելք՝ որ կրանիտեան ժայռի մը մէջ փորուած բազմաթիւ հեղեղատից անկողիններէ՝ աւելի դժուարագնայի եղած է և ողորկ և սահուն ջրոց վազելէն: Շատ տեղեր, էջերն անցնելու համար, պէտք եղաւ աչքերնին կապել:

Երկայն ժամանակեայ անգործութիւնը զրեռնակիրքը երկարատեւ չուոյ մ'անկարող ըրեր էր. մէկ ու կէսին կանկ առինք: Գրեթէ անձրևահոս տանեաց մը պէս զըժուարելանելի դառ 'ի թափի մը վրայ բանակը գրուեցաւ. այլ գտածներնուս մէջէն նուազ ծառան էր. ուստի բռնադատուեցանք սնպերով կահ կարասիքն ապահովցնել, որ չգլորտըրին Մաքադայի գաշտն, որուն բարձրութիւնը գրեթէ ութ հարիւր ոտք մերկէն վար էր:

Առանց դժուարութեան երկրորդ օրն սկսելով երկայն ընթացք մը, հասանք լեռներէ և ձորերէ: Մուրքնաբողայի ճախակովմեան ափուները, Մարադայի գլխաւոր գետակն, ուր կարաւան մը գտանք, որ ծովեղերքը փղոսկր կը տանէր: Այս ուղեորութեան զլուխը, ողորմուկ դէմքով մարդ մը, գոռոզութեամբ ուզեր էր ինծմէ

կերպաստու պատատ մը, իր համեստ խնդիրքը մերժուելով, պահանջմանցը թիւն ինքնացուց, և վերջապէս լոկ պարգև մը մտերաց: Այս մարդ տեղեկացուց մեզի՝ որ սուղացի իշխանն Միրամալոյ, որ Ունիանիէ մպէի արեւմտակողմը կը բնակէր, և երեք տարիէ 'ի վեր Արարնիւրուն հետ կը պատերազմէր, դեռ չէր վճռուած Գապորայի կողմերէն, և թէ այն քաղաքին մօտերէն անցնիլը վճարուածը համարուած էր:

Առաւօտունէ մինչև ետքը քալած ճամբանիս, բոլոր վերելից և արաւընթաց իջից յաջորդութիւն մ'էր, շատ տեղեր այնպիսի մաշած գահաւմիծից վրայ՝ որ քուարցի և կրակիտի սանդուղներ կը ձևացընէին, սահուն ծայրեր կամ փրթած և երբական քարի կտորներ. գոգքան զարմանալի բան մը կ'երևար՝ եթէ բռնակիրքն և էշերն իրենց բռնակիրքն ողջ և առողջ հասնէին:

Առաջին օրուրէն աւելի գծաւորեալն էր զառ 'ի վայրի մը վրայ բանակինս զրինք: Կարծես թէ ամենայն առարկայ ծանրութեան օրինաց հետեւելու կը հպէր, և ճիշդ ոտքերնուս տակը Մուրճուրուայ կը վազէր, գետ լայն, քիչ խոր, այլ ամենարագ:

Բոլոր բլուրներն, մինչև 'ի գագաթն, հովանոց-սկասեռներով ծածկուած էին, որոնք, Պիւրգընի ըսածին պէս, հովանոցներն բացած ամբոխի մը երևոյթը կու տան: Առատաջուր ձորոց մէջ, մարամուտի ծառը խրոխտաբար գլուխը կը բարձրացընէր:

Մարամուտին (*Taxus elongatus* Գեղձ երկայնաստեղծ) ծառային գեղեցկութեան ազնուագոյն օրինակներէն մէկն է: Հնգետասան ոտք տրամագիծով և հարիւր քառասուն ոտք բարձրութեամբ սիւն մը համարէ, բացառոյն գեղին կանաչ կեղևով մը պատած, և մութ կանանչի լայն ծայրով մը պսակեալ: Դժբաղդաբար այս բարձրաշուք ծառն, որուն կախուղ փայտն զիրու թեամբ կ'աշխատտի, շատ անգամ սովորական բանի շինելու զոճ եղած է — գուռ, որ կամ ամբու մը, — և որովհետև քիչ կը դիմանայ, 'ի բաց առեալ բոլորովին չորացած գործածելէն, շարունակ կը նորոգուի աւերման գործն:

Երկրորդ օրն, երբ վերջին մարդը բանակեալը կը ձգէր, ընծառիւծ մը, ճիրանաց մէջ կապիկով մը, ծառէ մ'ինկաւ, մեր բանակէն հնգետասան քայլ հեռու:

Ժամ մը գետին ըովէն ընթանալէն ետ-

քը, անցանք զայն իր անկողնոյն դժուարին դարձուածքի մը ըովէն. աւելնեցու հնգոց զաշտերէ անցնելէ վերջը, որոնց ցօղուններն քսան ոտքէ աւելի կը բարձրանային, հասանք Մուրճուրու Ունիանի գեղին մօտերը:

Այն տեղն ուսկից անցանք՝ Մուրճուրուայ յիսուն կանգուն լայնութիւն ունէր, երկու և կէս ոտք ջուր, և ժամուան մէջ երեսուն և չորս մէգր արագութիւն մը: Մանձաղուտ տեղը կը բարձրանար ամենէն գեղեցկագոյն մարամուտին զոր տեսեր էի. այս չքեղ ծառը կրկին էր. և իր նոյն կոճղէն ելած երկու բունքը, կ'ամբառնային գոնեայ հարիւր եօթանասուն մէգր բարձրութեամբ՝ չքնաղ ծայրով մը ոստեր արձկնելէն առաջ:

Մօտերը կանգնուած էր Քատէղամարէ հին գեղը՝ Նախընթաց տարւոյն հեղեղներէն և մարիկներէն աւրուած ըլլալով, գլխաւորին քանի մը գերիները միայն կը բնակէին հոն, տեսակ մը պահապանք՝ մարդու մը իշխանութեան տակ՝ որուն յանձնուած էր գաշտաց հսկողութիւնն: Ուսեալ 'ի փորձոյ, Քատէղամարէ լեռնակի մը վրայ իր բնակութիւնը հաստատեց:

Հազիւ թէ բանակիւր էինք, երբոր յանկարծ կին մը վազեց ինկաւ մէջերնիս, և խսալայ գլխոյն մաղբրուն հնգոցոյց մ'ըրաւ, այսպէս ինք զինքը միւր խնամատարին պաշտպանութեան տակ գնելով: Երկը գինքը ծնծիւր էր, վասն զի ձուկը գէշ կերպով եփած էր: Ամուսինն եկաւ փախտաւ կանին վրայ գանգատելու, որ իրեն յանձնուեցաւ, բայց եղ մը և երեք այծ իրեն փրկանք գնելէն վերջը, և գիւղին գլխաւորին զիմաց իրմէ խսատուին առնելէն ետքը որ ալ գլինք պիտի չնծէ: Այս սովորութիւնն, ինչպէս կ'ըսեն, բոլոր արեւելեան Աֆրիկէի մէջ տարածուած է: Գերի մը կրնայ այսպէս տէր փոխել, այն մարդուն որուն կ'ապաստանի՝ զգեստին որ և է կողմին հանգոյց մ'ընելով, կամ այս մարդուն վերաբերեալ աղիւղ մը կամ նիգակ մը կ'ուտրելով: Առաջին տէրը չի կրնար գինքն ստանալ, բայց եթէ ամբողջ արժէքը հաստուցանելով, և յայտնապէս խոստանալով որ ալ հետը գէշ չվարուի:

Յետագայ օրն, Քատէղամարէի հին սեւեւ գլոյն մօտերը բանակելով, քառասուն մարդ

գրկեցի 'ի Մպուժէ ասպրուստ գնելու համար: Առանց պատահարաց ճամբանին ըրեր և գնելու բաներին լինցիր էին, երբոր յանկարծ լուր ելաւ թէ մօտաւոր լիւանց ազգերը կ'իջնային գեղին վրայ յարձրելու: Այս գուժին ծագած չփոթութենէն, մեր մարդիկներէն մէկուն հրացանը դիւստածով արձրկուեցաւ և տեղացի մը սպաննեց: Բայց ժողովուրդը խուժեց մերիններուն վրայ. ոմանք բանտուեցան, մէկաւնոնք փախան, և գնուած ցորենը կտրուեցաւ:

Սփառ իպն Ոմար, որ մեզի զրկիր էր իր որդին 'ի Ռէհէնէէրոյ, և Մպուժէի մօտ կը կենար, անմիջապէս զրեց մեզի այս պատճառաւ, յետոյ հկաւ զմեզ գտնելու, և ամենայն հնարք բանեցուց այն ձախորդ վտանգէն զմեզ ազատելու: Հանդերձ այսու, այս դժբաղդ դէպքը բռնեց զմեզ մինչև 'ի ի յունիս, և մեզի արժեց երեք բռնի կերպասու: Այսպիսի դիւրին դաշկերով մը ազատելուս պէտք է զիս բարեբախտ համարիմ. ուրիշ կարաւաններ չատ աւելի թանկագին հատուցին իրենց Վուստակաբաներուն հետ պատերազմները, թէպէտ և այս կտիւները մարդու մը մահուանէն առաջ եկած չըլլային:

Ունիանիմպէն եկող կարաւանի մը միջոցով, որ ծովեզերք կ'երթար, մեր նամականին զրկեցի, ինչպէս նաև Վօֆֆադի Աստուածաշունչ Գիրքն և ժամացոյցն և հին հրացան մը, որ պապուն կը վերադրէր: Այս բաները Զանգիպարէն իմ խեղճ բարեկամիս մօրը պիտի զրկուէին, որ կը բնակէր 'ի Տուրպան:

Մի օթևանելուն ժամանակ, երեք կարաւանք հասան, որոնք մերինին հետ միացան, որպէս զի Ուկուկոյ անցնելու ատենն իս բազմաթիւ ըլլանք: Սնոնցմէ մէկը Վուստիամուէսիներէ կազմուած էր, որ 'ի Պակիմոյի վաճառած փղոսկիր գինը տուն կը տանէին:

Երկրորդ ուղևորութիւնը, քսանի չափ անձինք, դարբնոյ մը կը վերադրէր, որ յոյս ունէր Ունիանիմպէի մէջ բախտ չինել: Միւսմայի գէմ գործածուած հրացանները նորոգելով:

Վերջապէս՝ երկրորդն և այս կարաւանից մէջէն ամենէն բազմաթիւ, պղտի խումբներու ալլաւսեռ ժողով մ'էր, որ գլխաւոր ունէր Արաբներու ծառաներ, կամ իրենց

գերեացն՝ սևամորթից կը վերադրէր, որոնց բն ու հագիւ երկու տանող կ'ուզէր. խաժամուժ ամբոխ, որ սակայն լի յուսով կ'երթար դէպ յառասպելական ճոխութեան երկիրներ, «ուր փղաջ ժանիքը՝ զրանց չըջանակներ և գօտիներ շինելու կը ծառայեն»:

Վերջապէս, 'ի յուլիս ի ի, մեր ընկերութեանց ամբողջութիւնը հինգ հարիւր մարդէն աւելի բազմութիւն մը կը ձևացընէր:

Համբան, ապառաժուտ և սեպացեալ, տեղ տեղ կը խոտորէր կ'իյնար գետին վրայ, և ծակերով սփռուած, մայառնելով ծածկուած էր, այնպէս որ մեծ մասաւորութիւն կ'ուզէր. սոյն ալ պղտի քայլ մը զմեզ կրնար գահավիժել, ընդ թուփս և ընդ փուշս, Մուքոնոքուսայի մէջ: Այս վերջինս՝ ծանծաղ տեղէ մը նորէն անցանք, յետոյ ձորէ մը ելելով, անցանք զայն երրորդ և վերջին անգամ մը, Մատոէի կոչուած գեղի մը քով, ուր բաժնակը դրինք:

Փղաջ որսորդ մը, ծննդեամբ 'ի Մոմպաւսէ, այն աւանին մէջ կը սպասէր մարդկանց դարձին՝ զորոնք զրկիր էր ծովեզերքն իր փղոսկրովը: Աղեղս մը գինեալ էր, այնպէս սաստիկ թունաւորած նետերով, յորոց մէկը միայն բաւական էր փիղ մը սպաննելու՝ եթէ վէրքը խոր հանդիպէր, և զոյգ մը՝ եթէ թեթև. Պանանի տերէններու կշտորներ զգուշութեամբ կը փաթթէին այն սլաքներն, գժբաղդութիւնն արգիլելու համար. հազադակի մը մէջ թոյն կար նորէն թունաւորելու համար:

Ծանծաղուտէն ի՞նչ հեռու, ուսկից անցանք երրորդ անգամ, Ուկուկոյ՝ Մուքոնոքուսայի հետ կը միանայ: Առաջինն, համանուն լճի մը սահանք, կը վազէ հովտի մը մէջ երկու ամիսնցը վրայ բարձրաբերձ լեռներուն նալով, սեպացեալ գառնի վայր ներով, որոնց մէջ այնպիսի ժայռեր կը տեսնուին, որ, ըստ երևութիւն, մէկ միայն սիւնիկոյ կտորով բաղկացած ըլլալով, յարաբերութեան աղէկ կէտեր կը ձևացունեն:

Հովտէն առաջ երթալով, Ուկուկոյ լճին եզերքն հասանք, որուն սարածութիւնը կը զսնաղանի ըստ եղանակին մէկէն ինչուան երեք մղոն երկայնութիւն, և կէս մղոնէն ցածկ միոյն լայնութիւն, և գլխաւորապէս անձրեային ջուրերով կը սնանի:

Ուկուկոյ լիճը՝ ձիազետուոյ մեծ բազմու-

թիւն կը պահէ, և զնգհանրապէս իր հայրենի
բաղձմող ջրային թոցուններով ծածկուած
է, մինչդեռ փարաւորեան հաւերով շրջա-
կայ բլուրները լեցուն են:

Թէպէտ և ապահովցուցին դիս, թէ պէտք
եղածին պէս բոլոր էջերն կապուած են,
զիշերը մէկուն զոնչիւր լսիցի, բանակեա-
ղէն քիչ մը հեռու, զոնչիւն՝ որ յայտնա-
պէս ստակալի ցաւէ մը կամ մեծ երկիւղէ
մը յառաջ կու գար: Մթութիւնը կ'արգե-
լուր որ իրեն օգնութեան հասնէի, և առա-
ւօտը խեղճ կենդանին այնպէս պատառ-
տեալ և ծայրատեալ գտնուեցաւ, անտա-
րակոյս բորենիէ մը, որ հարկ եղաւ վերջին
հարուածը տալ:

Քիչ մը ետքը, սրտամալիկ պատկեր մը
բացուեցաւ աշուրներնուս դիմաց. ա-
րամբ, կանամբ և մանկամբ ձևացած
բազմութիւն մը, կահ կարասեօք բեռնառ-
րուած, մղելով յառաջոյ կովեր և այծեր,
առջևնէս անցաւ՝ փախստական ժողովրդ-
դեան մը պէս: Մրուարուայի շրջակայից
այլ և այլ գեղերու բնակիչք էին, վռնտուած
իրենց բնակութիւններէն ձուատիբիղոյից
ձեռքով, որոնց վրայ պիտի խօսինք ետքը:

Նրկու երկայն օթևանք, բոլորովին չոր
ցամաք երկրի մը մէջ, Մրուարուայէն զմեզ
կը բաժնէին, որ մեզի ճանցուց զիրիքեզան,
կամ չու յետ միջօրէի, Ալբրիկէի ճանա-
պարհորդին հանդիպած ամենէն տաժանելի
փորձերէն մէկը:

Կիրիքէզայ այնպիսի կերպով յարմա-
րեալ է, որ կէսօրը ելլելով շուր ունեցող
տեղէ մը, և երկայնելով շուր մթնալէն
ետքը, վերջէն կարելի եղածին չափ կա-
նուխ մեկնելու համար, կարաւանը քսան
ժամէն աւելի չկենայ առանց ջուր գտնե-
լու, փոխանակ երեսունի, ինչպէս կը հան-
դիպի առաւօտը մեկնելով:

Որքան քանակը վերցուեցաւ, և տա-
նուամէկին տանները վրանները ծալուե-
ցան, կիգիչ արևու մը տակ զմեզ թողլով,
առանց պզտի պատասպարութեան մը, և
այս՝ երկու ժամ: Յետոյ, մինչև ի գիշեր,
կիր դարձած և փոշիկից երկրի մը վրայ
քալեցինք, կրանիտի և քուարցի հանքե-
րով պատառոտած, այրեցած գօտույն արև-
գամէն և անձրևներէն սպիտակացած և
բաժնուած ի թիթղուէս: Փանի մը պառ-
պապ, սակաւաթիւ եւ փոքրիտներ, չոր և
ցանցառ խոտ մը, մեծաւ մասամբ կարաւա-

նաց ծխափողից ընկած կրակէն այրած, այս
էր բոլոր կանանչը:

Երբոր հասանք ՚ի Մադամոնտոյ, կանկ
տոնիք: Գետը բոլորովին ցամքած էր, ա-
ւաղ և ոչ տեղ մը թաց էր: Ուրիշ կողմա-
նէ, լսեր էի յԱլկոմալոյ իսսա՝ թէ մօտերը
ջուր կայ, և յետ երկար և տաժանելի հե-
տադատութեան խաւարի մէջ, լիմ մը գտանք:
Մարդիկներն հօն զնացին. բայց նայելով
ճամբուն վիճակին, մեր խեղճ էջերն անկա-
րելի եղաւ զրկել:

Նրկորդը օրն, բռնի քաղցինք՝ առաւօ-
տուան հինգէն փոշից թփոց մէջ, ելլելով
և իջնելով սեպացեալ բլուրներ, անցնելով
ապառաժուտ ճաղաքներ, երբոր կէսօրէն
վերջը երկուքին՝ մօտեցանք զառ ՚ի վայ-
րից՝ որոնց վրայ կը բարձրանայ Մրուա-
րուայ, և աչքերնիս զուարթացուցին տե-
րեցը կանաչութիւն մը, աւելներու ընդոց,
մարացորենի և գետնախնձորի դաշտոց,
ականակիտ ջուր մը, որ կը վազէր առուակ-
ներով աւազուտ լայն ջրանցքի մը մէջ:

Ով որ անբերրի և հրատոյժոր երկիր մը
չէ անցած, ինչպէս այն ուսկից կ'ելլայինք,
պիտի չմակաբերէ երբեք այն զովութեան
տպաւորութիւնը զոր աչքով զգացինք, և
ի մեզ փոխանցեալ հնչուութեան զգաց-
մունքն՝ այն տեսարանին յանկար ծակի տես-
լեամբը:

Եւ չիտակ առուն վազելի, և անոնց որ
ետ մնացեր էին՝ զրկելի որ խմեն: Հան-
դերձ այս նախազուշտութեամբ, բեռնակիր
մը, ինչպէս նաև էշ մը, Մրուարուայ տես-
նելէն առաջ՝ մեռան յոգնածութենէ:

Գետն ՚ի վեր ելլելով, ուր ջուրն աւելի
կ'առատոնար, և երկու կարգ մեծամեծ
ձառոց մէջէն կը հոսէր, ահագին ակասիայի
մը հովանւոյն տակ բանակեցանք, որուն
կէսը մեր երեք վրանքը լիով պարածած-
կեց:

Հագիւ տեղաւորուել էինք, Արաբի մ'այ-
ցելով թիւն ունեցանք, որ ներսերը չկարե-
նալով քաղց չինել, կը դառնար ծովեզերքը,
կարուանի մը հետ մէկտեղ՝ որ Ունիանիէմ-
պէյի հարուստ վաճառականի մը կը վերա-
բերէր, որուն կ'առաջնորդէր գերի մը:

Այցելուն կէս խնձր կ'երևար. ինչ որ
աւել լլայր, անկէ աւելի լիւր մարդ տեսած
չէի. առանց կերպով մը վարանելու, ծխա-
փողը բերնէս առաւ, և երկու երեք անգամ
ծխելէն ետքը, ազնուականութեամբ մը ան-

ցուց զայն չորս կողմի շարուած տեղացուց, որապչած դէմքով մեզի կը նայէին, ինչպէս միայն սեւերը կրեան ընել:

Քաւական ժամանակէ մը վերջը, քաշուեցաւ Արարը: Շուտով մը, մեղի Հետ ընկիրացած Վուանիամուէսիներուն լաւնակին մէջ ստիպելի զղղղիւն մ'եղաւ: Գնացի տեսնելու թէ պատճառն ինչ է, և զտայ զմեր այցելուն, որ իր կարաւանին քանի մը գերեաց Հետ, փորձ կը փորձէր վնասելու իրենց բանակետդէն զՎուանիամուէսիներուն, պատրուակաւ՝ թէ բակագիրներն իրաւունք չունէին բան մը ստանալու, և հօգոր Ռէհէնէքօյի ճիրաններէն ազատած բեռան մնացորդը, պէտք էր որ վերաբերի ճշմարիտ Հաւատացելոյ մը:

Բռնել տուի այս յիմարը իրեն կրօնական սկզբանց կատարմանը մէջ, և իր բանակը զրկեցի. և խաղաղութիւնը Հաստատուելով, Վուանիամուէսիններն՝ այսպէս տամբողութեամբ ընդհատեալ աշխատութիւններն նորէն սկսան:

Մարէնկա Մթայի անցնելու Համար, որ երեսուն մղոն երկայնութեամբ ուրիշ Հրանտա դաշտ մ'էր, բռնակին պաշտպանութեանը Համար երկու օր անցուցինք 'ի Մրուարուայ, Հիմայ ծարախ նեղութիւնը ճանչնալով, որոշեցի հոգալ կանխաւ, անցքին Համար առաձգական խէժէ չորս բարձրութիւն մէջ թուր լեցնելով, որոնց իւրաքանչիւրը կրնար առնուլ երեք կաշօն (տառն և չորս լիտր): Քիչ մը ճարպկութիւն պէտք եղաւ այս բարձրը լեցնելու: Բայց խողովակին՝ որ զանոնք ուռնցնելու կը ծառայէր՝ խցանն Հանելով, և օգտուելով սփռնածնաձև պղտիկ մզտրանի մը եղելով, յաջողեցանք գործն 'ի գլուխ Հաննելու:

Ի Մրուարուայ առաջին անգամ տեսանք զդէմպէ, որ ետքը բոլոր Աւելոյի մէջ Հանգիպեցանք, ուր՝ տեղացիք ուրիշ տեսակ բնակչութիւն չունին:

Այս տեսակ բնակչութիւնը պարզաբար երկու զուգահեռական պատերէ կը կայտանայ, որ ճեմելիք մը կը ձևացընեն, անջրպետներով բաժնուած: Հարթ տանիք մը, թեթեւ կերպով մը դէպ 'ի տան ճակատին կողմը ծած, կը ծածկէ ճեմելիքը, որուն իւրաքանչիւր բաժանմունքն ընտանեաց մը բնակչութիւն է: Ընդհանրապէս սրահին երկու պատերը ուղիղ անկիւնով կ'երկրնան՝ ուղղանկիւնաձև գաւթի մը չորս կողմանցը

միայ, որուն մէջ գլխերը բոլոր անասունքը կը փակեն: Մարդուս գլխէն ելած ամենէն աւելի անհանգիստ ճարտարապետական ձևն է. բայց ասիէ, այս Հաստրակ տանը սենեակներն, այծերու և Հաւերու Հետ բաժնուած, աղոտութեան չափ չունին և միջտաններով կը վրտան:

Մրուարուայի երկրին բնակիչքն աղեղ և նետ կը գործածեն, և ստուար գլխով գաւազան մը, 'ի կիր արկիւղ իբրեւ նետելու գէնք կամ իւրեւ լսիտ:

Զարդի Համար՝ պղինձ թելէ գինդեր և մանեակներ ունին:

Մովսիսիանց ժողովրդաց Հետ ստեպ յարաբերութիւն ընելով, Մրուարուայի մարդիկը Արաբներուն գերեաց պէս կը հազներն:

Իրենց և քանի մը Վուատրիկոյի մէջ, որոնք զմեզ տեսնելու հկեր էին, յայտնի անհիմնամատուցելուն մը կ'երեւար: Վուատրիկոյի, ցեղ սյրասիրտ բարձրականակ, կ'արհամարհէն ամենայն փափկութիւն քաղաքականութեան ինչպէս զգեստները. նաեւ շատ կանայք ուրիշ Հագուստ չունին՝ բայց եթէ մարդարտաց շորք մը, մանեակ և ապարանջան:

Մարդիկ՝ մորթէ մեծ վահաններ կը կրեն, Հինգ ոտք երկայն, երեք ոտք լայն, գաւազանով մը շրջապատած, որպէս զի չի գալարին, և ներքին ընդ երկայնութեամբ խաչաձև փայտով մը տարածեալ բռնած, և մէջ տեղը կ'որ՝ գաստակի ծառոյնը: Խաչաձևին աջակողմը, վահանը երկու խրաց ունի, որ մտէն կուռնելու կորովի նիզակ մը կը կապեն, և վնց կամ ութ բարակ տէգեր, որոնց ձողերը, պղնձաթել զարդարեալ, վարի ծայրն ունին գնտակ մը 'ի նոյն պղնձոյ, որ զէնքին բռն անցընելով, տելի կը ծանրացնէ զայն: Այս տէգերը, սքանչելի նրբութեամբ շինուած, ուժով և ճշդութեամբ յիտուն մէգրէն ասելի Հետու կը նետեն:

Վուատրիկոյի զինուոց գործածութեան մէջ կործութեան և յաղթարկութեան Համարան այնպիսի է, որ ոչ ոք 'ի ցեղիցն որոնց մէջ կ'երթան ընդհանրապէս կուռարարութիւն ընելու, կը փորձէ զիմակալել:

Երեք օր Հանգչելէն ետքը, սկսաւ կարաւանն առաջ երթալ, և Հասաւ 'ի Քիսոքուէ: Համայն ընելու ժամանակնիս, տե-

սանք շատ մը Մբուաբուայի կանայք, որ ժողովածոնին տուն կը տանէին՝ գլուխներուն վրայ դրուած լայն սապատներու մէջ։ Ոմանք տղայ մը կունկնդնէին ունէին, այծու կաշույ մը մէջ կախուած, և իբրեւ գոգնոց, մորթէ անթիւ երիւններ, իւրաքանչիւրը յուռութուլունքով մը, ի չարակիւտութենէ և յամենայն տեսակ կախարդանաց զորդին պահելու համար։

Վուաութիւրիոյք բնակէին ի Գիսգուէէ, քրոնք զմեզ ազէկ ընդունեցան. և որովհետեւ առանց այլատուութեան ստացած բանք դիւրութեամբ կը տրուի, վաճառեցին մեզի երկու եզն, վից այծ և կոզի, պղնձի և գունաւոր ապակեաց քիչ քանակութեամբ։

Յետոյ, ժամ մը և կէս զմեզ տարաւ ի Քէշուհիոյ, որուն ջուրերը համբաւ ունէին իբրեւ աղի և աղիտաբեր խմող կենդանեաց։ Բայց այն վատահամբաւ ջուրը բարի գտնելով, — բարձրուն ջուրը Մարէն կա Մբալիի համար կը պահէինք, — թողուցինք որ գրաստներն ըստ կամ ըմպեն, մտածելով որ այն որ մարգու համար բարի էր, չէր կրնար վնասակար ըլլալ ինչոց, և արդիւնքն զմեզ արգարացուց¹։

Ի յունիս 21 ուղղեցանք դէպ ի հրատու չոր դաշտավայրը։ Չուն դիւրաւ ըրինք՝ հորիզոնական և աւազուտ գաշտի մը վրայ, տեղ տեղ կրանիտ լիւնակներով սփռուած։ Թէպէտ և ճամբուն առաջին մասին մէջ առատ չէր բուսոց աճումը, — մանր, կարճ

և ցանցաւ խոտ մ'ըլլալով, մացառներու հետ խառնուած, — սակայն բաւական կ'երևար վազերածիոց և անդիլրաց մեծ հետեր պահելու։

Երեկոյեան իննին կանկ առինք, խեղճ աւախաններու ծառատունիկ մը մէջ. տատակիւ ծամճամբորդութիւն ըրիք՝ էինք։ Արեւ մտած ծամանակ, ետ դարձող կարաւանի մ'առջէն անցեր էինք, որ զիչերուան համար կը բանադէին. մեր մարդիկն արդէն յոգնած, կրնային ուզել անոնց հետ դադրիլ։ Բայց գիտնալով որ վաղուան անցքն ամենէն խիստն էր, կարելի եղածին չափ՝ կարճեցնել կ'ուզէին զայն, և շուն շարունակեցինք։

Շատ նորաձեւ եղաւ պատկերը զոր կարաւանը կը ներկայացնէր նստելու քնանալու համար։ Վրանները չլարեցեան, պատասպարութիւն մը չի կանգնուեցաւ. ամենքը բացօթեայ ննջեցին։ Մեր վրան՝ երկինքն իր թուի թափելը կը տարածէր, կիտուածեալ անհամար ոսկեճաճանչ աստղներով. ծառերուն ծայրը՝ բանակետեղ ծուխը կը կախէր նման տամասկեան դրուագի՝ երիզներ և սեւա կերպարաններ, կրակներուն մէջէն վեր ի վայր շարժելով, առ աչօք երևութով տեսարան մը կը ներկայացնէին։

Երկրորդ օրն, յետ հինգ ժամուց պարտասցուցիչ չուոյ նուազներով ընդհատեալ երկրի մը մէջ որ միայն անձրեւային եղանակին մէջ ջուր ունին, տեսանք այն սահմաններն ուր մշակութիւնք կը սկսին։

Մերիններէն ոմանք ծարաւահիւծ, վերցուցին գէշ տեսակ ձմերուկներ։ Սրահայտեց տեղացիներէն ոմանք զանոնք կը լրտեսէին, և քսան անգամ աւելի զին ուղեցին մեզմէ առաձներուն համար։

Վերջապէս, կէսօրը կանկ առինք բանաւեաղը զնելու համար. հազիւ թոյլտուութեամբ կրցանք էչերուն ջուր խմցնել, թոյլտուութիւն՝ որ պէտք եղաւ հատուցանել։ Մտեր էինք յԱւկոյոյ։

1 Այս ազատելիս կրնայ առաջ դառ ժամանակէն, որովհետեւ ջուրը խմեցինք, որ անձրեւային եղանակէն շատ հեռու չէր։ Սխալէյ, որ անցաւ Քէշուհիոյ ի 22 մայիս, կ'ըսէ ի փորձոյ. և Արաբները և տեղացիք աներկիւղ կը խմեն այն բուրակային ջուրը, և չեն վնասուիր, բայց ինչոց համար կը վախճան, և մեծ հոգ ունին զանոնք հեռացնելու։ Զգիտնալով այս բաները, տգիտանալով ճշգրիտ ուր կը սկսի դառն ջրոյ Դաւթի, (Թողուցի կենդանիներս որ երթան աւազանը. արգասիքն աղիտաւոր եղաւ. որոնք որ Մաքադայի աստվալի Ծախճախուտէն ազատեց էին, Քէշուհիոյ ջրհորներէն ուզանուեցան)։ (Ինչպէս Գրայ Վիլիամսը)։

Կը շարունակուի։